

ՏԱ. ՃԱ. ՀԱ. ՅԱ. Ք. Ք.

Զեյթունի կաթող. փոխանորդ Տ. Վաղարշակ վարդ. Պատրիարքարան կը տեղեկագրէ թէ քաղաքին և շրջակայ հռոմէական ազգայիններէն, որոնք 265 անձ կը հաշութին, 97 անձ վերադարձ են իրենց Տայրենի Եկեղեցւոյ գերեզ, ինչպէս նաև Համբէ-Ցերէի ազգայինք, որ ասկէ առաջ նոյն գաւանութեան գիմած էին, հարկ եղած ձեւակերպութեամբ դարձած են իրենց Եկեղեցին:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին քարտուղարութեան կողմէ Խըմբագրութեանո ուղղուած է Հետեւեալ պաշտօնական նամակը, որ կուղղէ քանի մը կէտերը Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին կողմէ փետր. 20 ամսաթուով Ս. Պատրիարք Հօր ուղղած ժամոթ պաշտօնագրին, զոր հրատարակեցինք ասկէ առաջ:

Տէր Խմբագրապետ,

Ներկայ Եօթնեկին մէջ ստացուած Պոլոյ թերթերուն մէջ ն. Ս. Օժութեան վետր. 20 ամսաթուով ի Պատրիարքարան զրկած պաշտօնագրի առաջարկութեանց մասը Խեղաթիւրուած աեսնուելով՝ հրամայուած է մեզ ուղղել:

1. Կիլիկիոյ կաթողիկոսները պէտք է յիշեն ի Պատրիարքի ընդհ. Կաթողիկոսի անունը: Եթէ նոյնը պահանջուի վիճակային բոլոր Եկեղեցականներէն, փոխադարձ պէտք է Պատրիարքարանի Վիճակաց մէջ Կիլիկիոյ Կաթողիկոսաց անունը յիշատակել՝ յետ Եջմիածնայ Կաթողիկոսին:

2. Կիլիկիոյ կաթողիկոսները ի կրօնականու անկախ են Պոլոյ Պատրիարքարանէն, իսկ հաւատոյ վերաբերեալ ժանրակշիռ խնդրոյ առթիւ Խորհրդակցութեան կը մտնեն, կամ կարծեաց փոխանակութիւն մը կը կատարեն: Մայր Աթոռոյ Կաթողիկոսին հետ:

3. Եթէ ի Կիլիկիա ճեռնագրուած եպիսկոպոսոնք, ըլլան վիճակւոր կամ սոսկ վանական, իրաւունք ունենան Եջմիածնայ Վիճակաց մէջ պաշտօնալարելու և հոգեոր քարձրագոյն պաշտօններու համար ընտրելի ըլլալու, առանց Կեղր. Վարչութեան հաւանութեան կամ ընծայագրին շալիտի կընան ձեռնադադրուիլ:

4. Կիլիկիոյ Կաթողիկոսաց տրուած Ամենապատիւ տիտղոսը շատ անիմաստ է, քանի որ կրօնուկան բարձր հեղինակութեան գաղափարը շամփուխեր յինքն։ Ամենապատիւ Պատրիարքներէն նշանակելի իրաւասութիւն և իշխանութիւն ունին Կաթողիկոսները, քանի որ եպիսկոպոս ձեռնադրելու և Ս. Միւռոն օրհնելու իշխանութիւնէն զուրկ են Պատրիարքունք։

5. Կիլիկիոյ Կաթողիկոսները 0սմ. Կայս. Կառավարութեան հետ իրենց յարաքերութիւնը ըստ սովորութեան Պատրիարքարանի միջոցաւ կը կատարեն։ Ուղղակի դիմումներ ալ կընան ընել։

6. Կիլիկիեան Վիճակաց Առաջնորդներու հաստատութիւնը ուղղակի Կաթողիկոսաց իրաւունքն է. վերահաստատութիւն Վարչութեան կողմէն, բացարձակապէս զլացումն մի է այդ իրաւանց։

7. Առաջնորդաց Պերաթները Պատրիարքարանի միջոցաւ կը ինգրուին և Կաթողիկոսաց կոնդակով կը յանձնուին Առաջնորդաց։

8. Կիլիկիեան Վիճակներէն Պատրիարքարանի պահանջած մուգաբան Կաթողիկոսարանի միջոցաւ կը հատուցուի կիսով չափ և մնացեալ կէոր Կաթողիկոսարանի յարաքերական գիւտաններուն կը յատկացուի։

Քարտուղարութիւն

1907 Մարտ 26 /i Մայրավանօ Սոոյ,

Մանզումէի Եփքեար։

ԿԱՐԳԱԼՈՒԹՈՒԹԵԱՆ ԿՐՆԴԱԿ

ՄԱՂԱՔԻԱ ՇԱՌԱՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ողորմութեամբ Ասուծոյ եւ Շնորհիւ Սուրբ Հոգույն եւ կամօք ազգին Արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիսոյ եւ Պատրիարք Հայոց Թուրքիոյ

Ամենեցուն որոց անկ իցէ յայտ առնենք թէ՝

Բազէշի Առաջնորդարանէ պաշտօնական տեղեկութեան համար ստուգուած է որ Վիճակին Տատիկ գաւառակի Դուլթիկ պիւղի Դաղար Տէր Դաղարեան և Պատ գիւղի Յովհաննէս Տէր Յովհաննէս և եան քահանաները այլի մնացած լինելով՝ յանդգնած են վերաստին ամուսնութիւն կնքել. վոխագարձարար իրարու վրայ պսակի արարողութիւն կատարելով։